

ՆՈՐԱԿԵՐՏ ՀԱՅ ԼՈՒՍԻՆԵԱՆՆԵՐ

(Շար. Բազմ. 1952. Թիւ 10-12, էջ 245)



3. — Լեւոնի վկայադրներուն մէջ չըկայ իր հայրերէն եկած ոչ մէկ յիշատակարան կամ դիր, որ ցուցնէր մեղի իրենց տոհմին ծագումը: Ոչ ալ կային եւ կորսուեցան, ինչ որ ծանօթ պիտի ըլլար իշխանին եւ յօժարութեամբ պիտի յիշատակէր: Լեւոնի վկայութեամբ այսչափ միայն գիտենք, թէ իր տունը մականուամբ Լուսինեան կը կոչուէր. ինչպէս կը գրէր Ռուսաց Աղեքսանդր Բ Յարին (հ. 16), եւ որ զուրկ էր ըսինք պատմական նշանակութենէ: Որով առաջին յիշատակարանը կ'ըլլայ իշխանին ծննդեան վկայադրը:

Իր ծնողքը 1821-ին ուխտի գնացեր էին Էջմիածին(18), ուր պատահեցաւ իր ծընունդը եւ հոն մկրտուեցաւ Եփրեմ կաթողիկոսի ձեռքով, որուն ստորագրութիւնը

կը կրէ վկայադրին ալ: Ասոր հայերէնը չեմ տեսած, ոչ ալ յիշուած է գոյութիւնը, կը թարգմանեմ զաղղիւրէնէն(19), որ է այս.

«Մեմ Եփրեմ, ծառայ Յիսուսի Քրիստոսի եւ անոր շնորհիւ Կաթողիկոս ամենայն Հայոց...

ասով յայտնի կ'ընենք բոլոր արտաքին պետութիւններուն, մեր ազգին եւ համօրէն քրիստոնեաներու, թէ Լեւոն Հայոց իշխանը, իշխան Կորիկոսի, ծնած է Էջմիածնի մէջ 1821 Օգոստոս 18-ին:

«Իր ծնողներն են՝ Յովսէփ Հայոց իշխանը, իշխան Կորիկոսի, եւ վրաց իշխանուհի Հեղինէ, բազրատունի իշխանուհի:

«Մեր օգոստոսական տէրը Լեւոն Հայոց իշխանը, իշխան Կորիկոսի, ճետ՝ Լեւոն 2 Հայոց թագաւորին եւ Մարիամ Հունգա-

րիոյ՝ Լուդովիկոս թագաւորի տունէն, սերած Լուսինեաններէ, Լեւոն 2-ի Փիննա աղջիկէն եւ Հայոց իշխան, Կորիկոսի տէր՝ Շահանէն, մկրտուեցաւ 1821, Սեպտեմբեր 23-ին, մեր ձեռքով, Կաթողիկոս ամենայն Հայոց, մեր արքեպիսկոպոսներու ներկայութեան, հայ եկեղեցւոյ մէջ:

«Կնքահայրը եղաւ Վրաց իշխան Կոստանդին, Բազրատունի իշխանը:

«Ծագման այս վկայադրը տրուեցաւ մեր օգոստոսական տիրոջ, իրրեւ անհակառակելի հաւատարմ իր իրաւունքներուն:

«Էջմիածին, 23 Սեպտեմբեր 1821.

Կաթողիկոս ամենայն Հայոց

ԵՓՐԵՄ

Վասն հաւասարութեան օրինակի
Ս. Պետերբուրգ Եւստելլոսէ

Տարօրինակ է այս վկայադրին մէջ նախ այն՝ որ մինչ Լեւոնի հայրը կենդանի է, այդ նորածին մանուկը «Մեր Օգոստոսական տէրը» կը կոչուի. տիտղոս մը որ ներկայ իշխանին կը վայելէր՝ ոչ ապագային որ չէր տակաւին: Երկրորդ՝ մինչ Յովսէփ գեռ կը բռնէ ու կը վարէ իր երկիրը, զոր Ռուսիա ութ տարի վերջ եւ անոր մահէն վերջ պիտի գրաւէր (1829ին), հոս պաշտպանութիւնը կ'ըլլայ հաւաստեօք «անհակառակելի իրաւունքներուն», ոչ իր հօրը՝ այլ Լեւոնի: Եւ հոսակ՝ մկրտութեան վերնագրին վրայ կը դրուի «Ծագման վկայադրի» հանգամանքն ալ, որ անընական է. մինչ բաւական էր ըստ սովորութեան նշանակել ծնողաց անունն ու տիտղոսը միայն:

Այս երեք պարագաները թոյլ կու տան հետեւեցնել՝ թէ այդ վկայադրը շարադրուեր է Լեւոնի զահապրութենէն վերջ,

որ հարկաւոր կը դարձնէր շէտեւ անոր տոհմին ծագումը եւ իրաւունքը. եւ հաւանօրէն գրուած ըլլայ Եփրեմի մահէն առաջ (1831), եթէ իսկապէս անոր ձեռքէն ելած է. եւ դիտմամբ դրուած ըլլայ ծննդեան թուականը, այդ օրէն կարծեցնելու համար զայն:

Յամենայն դէպս կաթողիկոսական այս վկայադրը առաջին դրաւոր վաւերացումը եղաւ Լեւոնի արքայական ծագումի դադարաւորին: Անոր վրայ կար Լուսինեան ազգանունը եւ Չամչեանի քով՝ Փիննա ու Շահան. յարեցին իրարու եւ հարցը ինքնին լուծուեցաւ: Շուտափոյթ եւ գործնական դրութիւն հիներու:

Դիտելի է որ թէ՛ Լեւոն եւ թէ՛ հայրը կը կոչուին «իշխան Կորիկոսի»՝ բնական հետեւութեամբ Չամչեանի տուած տեղեկութեան. նոյնպէս նաեւ Թորինոյի մէջ զետեղուած վաւերադրներու մէջ (հ. 9)(20): Իսկ Լուսինեան մականունը սովորական չըրաւ իրեն Լեւոն, վկայելով հանդերձ թէ այդ էր ընտանեկան ազգանունը, եւ որուն յեցած կը յայտարարէր Ռուսաց Ալեքսանտրա կայսրուհիին, թէ ինք էր «ուղիղ ճետ 2 Լեւոնի արքային Հայաստանի»(21): Այլ յետոյ այդ դադարաւորէն կերտեց եւ իրեն սովորական դարձուց «Լեւոն իշխան Հայաստանի» տիտղոսը զոր կը կիրարկէ 1850-էն(22) սկսեալ. եւ կը նշանակէր արքայազարմ ու ժառանգ. Հայոց դահին: Երբ անկարելի տեսաւ այդ տեւաչանքը, վերստին դարձաւ «Լուսինեան»ին, ինչպէս ուրիշներ ալ կը կոչեն զինքը, իր կեանքի վերջին տարիներուն եւ մահէն վերջ(23). եւ ինք նոյն տիտղոսը կիրարկեց իր կտակին մէջ իր եւ իր զաւակներուն(24) նկատմամբ, որոնցմէ անդրանիկը պահեց զայն միշտ(25):

(18) Vér. 9, Mém. 22. (19) Mém. 4.

(20) Vér. 42. (21) Mém. 13.

(22) Vér. 37.

(23) Vér. 61. 62. 63. 66. 67.

(24) Mém 64. 65. (25) Անդ. 73. 80.

Համոզուած էր Լեւոն թէ անանց անուններու երկար շղթային, որ կը պակսէր իր տան եւ հայոց վերջին թագաւորին միջեւ, կարելի էր վստահիլ իր արքայազարմութեան: Չենք դիտեր. բայց քանի որ իր տոհմը Լուսինեան կը կոչուէր, իրեն բնական էր շողմիշ ու շահաւոր տեսնել այդ գաղափարը ու փարիլ անոր, թերեւս նաեւ կանխակալ համոզումով մը, որ անսովոր բան մը է:

Իրմէ առած նոյնը վկայեցին հայոց իշխաններն ալ 1856, 10 Օգոստոսի Փրուսիոյ կառավարութեան բողոքագրին մէջ, ահաւարկելով Եփրեմի վաւերագրին ու դաւանելով Լեւոնը «Ուղիղ ճեւ Լեւոնի Զ-ի արքային Հայոց» (26): Եղուարդ արք. Հիւրմիւզ, ծանօթ հայկաբան, նոյնը կը կրկնէր Հոռոմի տուտական դեսպանին տուած խնդրագրին մէջ (1858), Լեւոնը կոչելով «սերունդ յիշեալ թագաւորին» (27), թէ եւ անանց ներքին վստահութեան (հ. 11. 19): «Հայաստան մեծ է, կը դրէին ուրիշ երկու իշխաններ, եւ հոն կը հաշուէին հարկերէ աւելի իշխանական ընտանիքներ. ուրեմն կան բազմաթիւ հայ իշխաններ, բայց մի միայն իշխան Հայաստանի» (28): Իսկ Լեւոնի Վոքս (Չայն) կեղծանունը ջատագովը, որ շարադրեց *La Vérité*-ն, անոր գաւազններուն կերպարանքներուն վերայ կը տեսնէր «իրենց հին նախնի Լեւոն Զ-ի մեծ նմանութիւնը» (29):

4. — Պատմականօրէն անհիմն էր, ըսինք, այդ տեսութիւնը: Եւ ինչ որ աւելի զարմանք կը պատճառէ, է այդ վկաներու նկատի չառնելը՝ թէ Լուսինեան Փիննայի գոյութիւնը եթէ ստոյգ ալ ըլլար, անոր օտարի հետ ամուսնութենէն չորս հարիւր տարի յետոյ Լուսինեան արիւնի եւ ոչ իսկ կաթիլ մը կրնար մնալ Լեւոնի երակներուն մէջ, թող թէ «ուղիղ ճեւ Լեւոնի Զ-ի

արքայի» կարծել ու կարծեցնել տալ դանիկա: Աւելին կայ: Նախորդ դարուն (ԺԷ) մէջ, ուր Հայաստանի պարսկական լուծէն աղատութեան գաղափարը արծարծուեցաւ աւելի քան հարիւր տարի, եւ երկար բանակցութիւններ կատարուեցան այդ մասին Հայոց եւ Ռուս պետութեան միջեւ (30), մեր այս Լուսինեաններու անունը չկայ բնաւ, մինչ կը յիշուին Ղարաբաղի Մելիքութիւնները: Յովսէփ արքեպս. Արղու-թեանց 1790-ին հայ անկախութեան ծրագիրը կը պատրաստէր եւ կը յանձնէր Ռուսիոյ, Հայոց թագաւորին ընտրութիւնը թողնելով Ե Կատարինէ կայսրուհիին, «թէ յաղթէ մերմէ կացուցէ եւ թէ ի դրան իւրում եղեալ, հաւատարմիցն իւրոց»: Իսկ ինք կը փափաքէր Հայաստանը միացնել Վրաստանի հետ. անոր իշխող գաւազանին ներքեւ (31): Սակայն 1801-ին Վրաստան միացաւ Ռուսիոյ հետ, կորսնցուց գահը եւ Հայոց անկախութեան շարժումն ալ վերջացաւ: Հոն ալ լուսթիւն է խորասանի տէրութիւններու մասին:

Կը հետեւի որ այդ շրջանին ո'չ հայերը եւ ոչ ալ Լեւոնի նախնիքները դիտէին կամ կը մտածէին իրենց տոհմին ցեղակցութիւնը մեր հին Լուսինեաններու հետ կամ արքայական իրաւունքներու մասին. դադար մը որ շատ ուշ երեւան պիտի դար, եւ այդ Լեւոնի օրով եւ վկայադրովը Եփրեմի, որ օգտուելով անոր յարմար մականունէն, ուղեց ստեղծել Հայոց գահին վրայ հայ ժառանգ մը, եթէ ստուգիւ իրն է այդ վկայագիրը:

Բայց իրական էր այս Լուսինեաններու Հայաստանի վերջին փոքր իշխանութիւններէն մէկն ըլլալը: Այս բանը նոյնինքն Լեւոն կը հաստատէր 1856-ին Ռուսաց Արքայապետի մայր կայսրուհիին տուած յուշագրին մէջ, ըսելով այսպէս. «2. Վ.

է՛ք կարող անդիտանալ որ Հայաստանի վերջին ինքնագլուխ իշխանները, հին դանիքներով կապուած ըլլալով Պարսկաստանի հետ, դժբախտաբար հարկադրուեցան մասնակցիլ պատերազմին, որ այդ պետութիւնը վարեց Ռուսիոյ դէմ: Պատերազմէն վերջ Պարսից տէրութիւնը դրեթէ վերստացաւ իր նախկին սահմանները: Բայց դժբախտ Հայաստանը անթարկուեցաւ յաղթականին լուծին. իր իշխանն (32) ալ իջաւ սոսկական անհատի մը վիճակին եւ կայսերական թաղին անցան արքայական տան բովանդակ կալուածները, զորոնք Լեւոն կ'արժեցնէր «20 միլիոն Փրանք» (33): Նոյն դրաման եւ իր գահագրկութեան կ'անկարկէր նաեւ առ Աղեքսանդր Բ աղերսագրին մէջ. (հ. 16): Այսպէս ուրեմն հայկական անկախութեան ցանկացեալ խնդրին մէջ՝ ոռոսական լուծումը եղած է հայ փոքր իշխանութիւններու ալ ջնջումը:

Արդ Լեւոն չէր կարող առասպել պատմել խօսելով Ռուսերուն հետ եւ անոնց ծանօթ իրողութեան մը մասին զոր Գուրգոն իր որդին ալ կրկնեց (34): Եւ ասոր տեղեկագիրը Փր. Բոճճի՝ կը յիշատակէ անոնց տիրապետութեան տեղը ու պայմանն ալ, կոչելով «Լեւոն ԺԳ թագաւոր Խորասանի» (35): «Թագաւորը» պիտակ կոչում մըն է, նշանակելով իշխանական ինքնավարութիւնը. իսկ ԺԳ-ը՝ երեւակայութեամբ ստեղծուած թիւ մը, կամ յօդուածագրին սխալը, վասնորի ուրիշ տեղ եղած է է, ինչպէս պիտի տեսնենք (հ. 6):

Ինչ տեղեկութիւն որ ունինք խորասանի այդ տեղերու մասին, ամբողջովին կը խմբուին Լեւոնի անձին շուրջ եւ կատարեալ լուսթիւն է անոր նախնիքներու մասին, նոյնիսկ իր կողմէն, այնպէս որ մենք

Լեւոնի կենսագրութիւնը կը գրենք, ոչ թէ անոր տոհմին պատմութիւնը:

5. — Լուսինեաններու երկրին գրաւումը պատահեցաւ, ինչպէս ըսինք՝ 1829-ին: Լեւոնի մայրը վախճանած էր 1826-ին, եւ հայրը՝ պատերազմէն տարի մը առաջ (36): Լեւոն, միամօր որդի (37), այդ ժամանակ ութամեայ մանուկ մըն էր տակաւին, եւ տարի մը միայն նստաւ հայրենի գահին վրայ: Իրեն խնամակալ ունէր՝ յանձնարարութեամբ հօրը, որ վրաստահութիւն չունէր հասարակաց դպրոցներու վրայ, անոր երկու մտերիմները, Վահայ եւ Երզնկայի իշխանները. իսկ Եփրեմ կաթողիկոս անոր դաստիարակ նշանակեց զՏէր Թովմաս Լալիսկոպոս Տայոց, ինչպէս կը վկայէ հայոց աւագանին բողոքագիրը (38):

Դաստիարակութեան արդիւնքը: — Երկու իշխաններ, Մամիկոնեան ու Մաղիստրոս Արշակունի, զինք կ'անուանէն «քաջավարժ փիլիսոփայութեան մէջ, եւ յանուանէ բնական եւ ազգաց իրաւանց. անդամակից Էդաւ 1839-ին Լիւդդայի (Պաղեստինի քաղաքին) գիտական ընկերութեան», որուն լատիներէն վկայագիրն ալ ունէր (39): Ուրիշ ծանօթ մը իրեն Վոքս զոր վերեւ յիշեցինք, կ'ըսէ թէ սորվեցաւ «Անգղիացուց քաղաքական կադմութեան ամբողջ յօրինուածքը» անոնց աշխարհին մէջ իսկ: Իսկ ի Գաղղիա ուսաւ 1848-ին հանրապետական կարգերը: Կ'աւելցնէ թէ ունէր «խոր եւ ալաղան դարգացում մը, ծանօթ Եւրոպայի եւ Ասիոյ լեզուներուն, վարժ մարմնական հրահանգներու մէջ, դաստիարակուած հայրենիքի պաշտամունքներուն մէջ» (40): Կ'երեւի թէ անգղիական եւ գաղղիական ուսումներն ըրաւ

(26) Mém. 23. (27) Mém. 10.
(28) Անդ. 37. (29) Vér. 33.

(30) Փորձ Բ. Թ. 1, էջ 367-94, Գ. Թ. 2, էջ 389-404.
(31) Անդ. 285-387.

(32) Այսինքն՝ Լեւոն. (33) Mém. 13. 16.
(34) Vér. 77. (35) Omnib.

(36) Ցուշ. 23. (37) Անդ. 13. (38) Անդ. 23.
(39) Անդ. 31. (40) Ճշ. 8, 9, 13.

իր Ռուսիայէն արտաքսուելէն վերջ: Լաւ տեղեակ էր նոյնպէս Եւրոպայի պատմութեան եւ հին ու նոր մատենագիրներուն, որոնցմէ յաճախ կոչումներ կ'ընէ իր թղթականութեան մէջ: Յարաբերութեան մէջ էր իրեն ժամանակակից մատենագիրներու հետ. եւ նամակ մ'ալ ունի Լամարթինէն, որ կ'ըսէ. «Մեծ հիացում մը ունիմ ու ջերմ համակրութիւն մը կը դրամ ձեր մեծ ժողովրդեան հանդէպ» (41): Բաւական վարժութիւն ունէր նկարչական արուեստին մէջ ալ, որ յետոյ տնտեսապէս ալ օգտակար պիտի ըլլար իրեն (հ. 24):

6. — Այն հայ իշխանները որ կոռեցան Ռուսիոյ դէմ՝ ի պաշտպանութիւն իրենց երկիրներուն՝ ցրուեցան «յարեւելս» իրենց իսկ վկայութեամբ (42): Բայց Լուսինեաններու տունէն զէնք բռնող չկար եւ ո եւ է դիմադրութիւն չէր եղած Ռուսերուն թըշնամի համարութեւ համար: Կար նաեւ իրենց արքայական մականունը, որ աւելի շուք մը կու տար այդ ընտանիքին: Նկատելով այս ամէնը, Նիկողայոս Ա. կայսրը իրենց զրկանքներուն փոխարէն անուանեց Լեւոնը — յայտնի չէ երբ — պատուակալ զնդապետ Յարկոսելլոյի կայսերական ձիաւոր պահակներու, ինչպէս կ'իմացնէ ինքն ալ առ Աղեքսանդր Բ. աղերսագրին մէջ (հ. 16): Եւ անոր վկայագիրը կը պահէր միշտ, ինչպէս կը գրէ նամակի մը մէջ (30 Յունիս 1858): Այդպէս խաղաղ կը մեծնար պատանեակը, մինչեւ հասաւ քաղաքական կեանքին մէջ նետուելու օրը եւ առիթը:

Յովհաննէս Կարբեցի կաթողիկոսին ժամանակ չփոթութիւն ինկաւ էջմիածնի միաբանութեան մէջ, հակառակ հայրապետին, որուն ծածուկ դրդիչ կը համարուէր Ներսէս Աշտարակեցի (43), նախկին

առաջնորդ Տփղիսի եւ այն ատեն Պեսարապիոյ, որ յետոյ պիտի յաջորդէր Յովհաննէսի: Յարաբերութիւնը լաւ չէր Մայր Աթոռին հետ, եւ կառավարութիւնը կ'ուզէր որ նա բոլորովին հեռանար վիճակէն ու մօտենար Էջմիածնի (44):

1839-ին յայտնի չէ թէ ինչպէս յանկարծ երեւցաւ Տփղիսի մէջ՝ ուր իրեն համակիր ունէր քաղաքին հայութիւնը: Ակններեւ է որ այդ այցելութեան մէջ կար հաւանութիւնը կառավարութեան որ փութաց վանել զայն իր թեմէն: Այդտեղ առաջին անգամ ասպարէզ մտաւ պատանին Լեւոն դեռ 18 տարեկան ու կրակոտ՝ ի պաշտպանութիւն Ներսէսի, որուն հիացողն էր: Ինչ-արդիւնք ձեռք բերաւ՝ չէ ըսուած. բայց իր պատանեկան թափը չէր կրնար անշուշտ փոխել քաղաքական իշխանութեան կամքը, որ անոր խակութեան նայեցաւ ներողամտութեամբ: Այս պատահարին հետ նոյն կը թուի, եւ չափազանցուած ձեւով, Եղուարդ Արք. Հիւրմիւղեանի դրածը իր հարազատին (Գերայ. Գէորդ. Հիւրմիւղեան Արքահօր), ի վեհատիկ, թէ Լեւոն «ի 1840 փորձ փորձեալ է միանգամ յարուցանել զիւրոն ընդդէմ նորա (Ռուսիոյ), եւ աղաչանօք եւեթ Ներսէսի դադարեալ է, եւ խոյս տուեալ անդրէն յԵւրոպա» (Գիւան Ս. Ղաղարու, 1858): Եթէ այդ անգամ փախած ըլլար պիտի չկարենար դառնալ եւ հանդիստ ապրիլ հոն տարիներով: Ռուսիոյ համբերութիւնը մինչեւ հոտ չէր հասեր, ինչպէս յետոյ պիտի տեսնուի: Հիւրմիւղեանի տեղեկութեան մէջ երկու պատահարները իրարու խոսնուած են, ներկան ու յաջորդը՝ զոր պիտի պատմենք: Բայց Լուսինեան պատանին ցոյց տուած յանդուութիւնը բաւական եղաւ որ «այդ ժամանակէն շահէր նա Հայաստանի մէջ ժողովրդը»

(43) Ա. Յնայն Հայոց կաթ. Բ. 160-227.

(44) Ա. Յն, 300, 460-62.

դեան մեծ սէրը, որ շատ աճեցաւ 1846-ին, կը գրէ հայ աւագանին: Այնպիսի անդեցութիւն մը կը կիրարկէ նա իր հայ ու վրացի հայրենակիցներու հոգւոյն վրայ, որ փորձել դաշիլ անոր՝ հաւասար էր դըպչելու սուրբ տապանին» (45): Հայ ժողովուրդը այնտեղ կանգ չառաւ: Շատ տարի չէր որ հայրենի ազատ դաւառները ինկած էին ոռոսական անիրաւ լուծին տակ: Ինչո՞ւ չլիքստանալ այդ անկախութիւնը, մանաւանդ աւելի կատարեալը: Ատոր համար առաջնորդ մը պէտք էր. ահա ասիկ յարմարագոյնը՝ արքայազարմն Լեւոն իրենց քով պատրաստ: Եւ յիշեալ 1846-ին խկոյն «Հռչակուեցաւ թագաւոր Հայաստանի, Լեւոն Է. անուամբ, Երեւանի ժողովրդեան կողմէ», կ'ըսէ Միլանի Պրեստորական յայտարարութիւնը իւր մասին հաստատութեամբ վկայից (հ. 24), եւ կը վկայէ իր որդին Գուրգոն (46), ինչ որ հաւատարի կը դարձնէ այդ տեղեկութիւնը. բանաստեղծ ժողովուրդը մը եղած է միշտ հայր: Ազատութեան դադարաւոր բանաստեղծները ներշնչեցին անոր. բանաստեղծներն էին որ ըսին թէ «մեր բահերը» բաւական են խորտակելու բռնակալներու բանակներն ու գէնքերը եւ շանսատակ ընելու դանոնք: Անոր վերջին քաղաքականութեան մէջ կարեւոր բաժին մը ունեցան բանաստեղծները. եւ դեռ այսօր դրականութեան մէջ անոր ամէնէն մեծարեւելի ու փարեւին բանաստեղծութիւնն է, որ կը խոստանայ բայց չի տար, կը խրախուսէ բայց չի փրկեր: Եւ կ'աւարտի յօդս ցընդելով ինքն ու խոստումները:

Նոյն աղբիւրն զաւակն էր եւ Լեւոն, վարակուած նոյնպէս բանաստեղծութեան: «Եռանդոտ ու խելացի միանգամայն, զեղեցիկ ու քաջ. սէրն ու պարծանքը իր ազ-

գայիններուն», ինչպէս կ'ըսէ Վոքս (47), կամ «դարձը մեր հայրենեաց» իր մտքին ու սրտին սակաւազիւտ կարողութիւններովը՝ հայ իշխաններուն համեմատ (48), զգաց այդ ամէնը, չիացաւ ու խորհեցաւ՝ թէ զեղեցիկագոյն առիթն էր իր մտացածին արքայազարմութիւնը իրական արքայութեան փոխելու. եւ միացաւ ժողովրդեան հետ: Ինքն իսկ կը խոստովանի իր այդ հոգեկան վիճակը յետ տասնամեայ ժամանակի, երբ աչքերը բացուած էին, առ Աղեքսանդրա կայսրուհին աղերսագրին մէջ (հ. 9) հետեւեալ զղջական բառերով. «Իշխանն Լեւոն, միակ ժառանգ դահլնկէց արքայի մը, իր մատաղագոյն հասակին մէջ անձնատուր իր երեւակայութեան խոստումներուն, բնականապէս պիտի սնանէր այդ անուրջներով, որ չեն անջատուիր բնաւ ինկած թագաւորական տոհմերէ»: Ոչ բանակ, ոչ գէնք կամ բահեր այդ յեղափոխութեան մէջ, որ աւելի պարզ ձեւով մը կը կատարուի. ժողովրդեան ու իշխանին երեւակայութիւնն ու լեզուն միայն կը շարժին ու կը կարգաւորեն ամէն ինչ: Տեսակ մը թատերական ներկայացում: «Հայոց իշխանին միակ յանցանքն էր, կը յարէ Լեւոն, իր մատաղ հասակին մէջ շատ քաթարաձայն յայտնել իր տըրտունքները, որոնցմէ չէր կարող ազատիլ»: Բայց բռնակալներու, որոնց խիղճերը պղտոր են միշտ, այդչափ ալ բաւական էր դործի անցնելու: «Իր անճաճ տրտունջները, կը շարունակէ Լուսինեանը, անհաճոյ թուեցան կայսերական կառավարութեան» (49):

Եւ ահա օր մը նամակ մը հասաւ իր ձեռքը նոյն տարւոյ 24 Ապրիլմբերի թրականով, եւ Պետերբուրգի զինուորական հրամանատար Քրապոդիսկիի ստորագրու-

(41) Ա. Յն, 25.

(42) Յ. շ. 36.

(45) Յ. շ. 23, (46) Յ. շ. 68, 77.

(47) Ա. Յն, 10.

(48) Յ. շ. 37.

(49) Յ. շ. 13.

թեամբ, որ կը պատուիրէր ամսոյն 27-ին «անյապաղ մեկնիլ» Ռուսիայէն: Կը յարէր թէ կայսեր հրամանաւ իրեն կանխաւ սահմանուած 2000 Փրանկի տարեթոշակը, որու յաւելում խնդրած էր Լեւոն, անխփփօս կը մնար, եւ պիտի ստանար զայն ռուսական դեսպանէն այն մայրաքաղաքին, ուր պիտի բնակէր: Եւ թէ այդ խնդրոյ մասին ո՛ր եւ է թղթակցութիւն աւելորդ էր կայսրին հետ(50):

Սահմանուած օրը Լեւոն ծրարեց իր ընտանեկան բովանդակ շարժուն հարբստութիւնը. «բոլոր յարգի իրերս եւ ազամանդներս ժառանգութիւն իմ նախնիքներէս, մէկ միլիոն ռուբլի արժողութեամբ, եւ ամբողջ դրամս 12,000 լիրա ստերլին անգղիական արժէթուղթով, կամ 300,000 Փրանկ», ինչպէս կը գրէր Նիկողայոս կայսեր, կայսրուհին եւ այլ իրազեկ իշխանութեանց(51), որոնց չէր կարող անշուշտ երազարանել, թէ եւ կրնար չափազանցել: Այդ դոմարին մէջ կը թուի նաեւ իր «մօրաբոյժ թագուհոյն» Վրաց նապստն ալ՝ յղած նախարարի մը ձեռքով, ինչպէս կը գրէ նամակի մը մէջ(52): Զըմեռնային քաղցած դայլերու պէս հասան իր բնակարանը ռուս մեծանձն պետութեան պաշտօնեաները, կողոպտեցին իր ամբողջ գանձը, թողլով զինք հազած զգեստներով միայն. ընկերեցին ի Քրոնշտատ, տուին ձեռքը 100 դուկատ, որ «իմ թագիս ազամանդներէն մէկն անդամ չէր արժէր», կ'ըսէ. եւ յանձնեցին զինքն Անգղիա մեկնող նաւին(53): Ռուսական նրբամտութիւնը կը խորհէր թէ Լեւոնը ազգատութեան մատնելով, քաղաքական անուրջներէն դիւրաւ պիտի հրաժարէր: Եւ հայոց թագապահանջը դնաց պանդխտութեան ու կարօտութեան մէջ որոնելու իր երազած գահը:

7. — Ուրիշ անակնկալներ պահած էր իրեն Լոնտոն՝ ուր կը գտնուէր այժմ: Գնաց ռուսական հիւպատոսին, եւ ստացաւ առաջին ամսաթոշակը՝ 1000 Փրանկ: Դարձաւ երկրորդ ամսոյն եւ հիւպատոսարանի դուռը իր դիմաց փակ դրաւ(54): Յանուն կայսերական վեհափառութեան պատրաստուած կատակերգութեան մը վերջին արարն էր եղած հազար Փրանկը, եւ հայոց իշխանը մնաց մերժուած եւ անօգնական: Բայց հզօր կամքի ու տոկուն նկարագրի տէր երիտասարդ մըն էր նա, եւ լքումը իրեն համար չէր ստեղծուած. իրեն՝ որ կը բորբոքէր իր 25 տարիներու արեւով եւ իր ազնուականութեան յուշերով:

Թէ ի՛նչպէս անցուց աքսորին յաջորդող վեց տարիները, վաւերագիրները լուռ կը մնան: Բայց թափառական կեանք մը կը վարէ աշխարհէ աշխարհ եւ կը զբաղի իր մտաւոր զարգացմամբ՝ զոր յիշեցինք: Այսպէս գիտենք որ 1850-ին Բարիդ է. եւ նոյն տարւոյն Մայիսի 26-ին Բրուսիոյ արքայեղբօր ձեռքով աղերսագիր մը կը գրէ Նիկողոս Ա.ին, իմացնելով որ Ռուսիայէն ելլելու պահուն իր բոլոր ստացուածքը կողոպտած էին իրմէ. եւ խոստացած 12,000 տարեթոշակը զլացուած, բացի հազարէ մը, զոր ընդունած էր: Եւ կը հայցէ իրեն պատշաճ ուճիկ մը՝ եթէ թոյլ պիտի չտրուի իրեն, « բնակիլ այն երկրին մէջ, որուն Աստուած զիս ժառանգ ըրաւ», եւ կամ չեն դարձուիր իր ինչքերը(55): Պատասխան՝ լուծիւն: Զօրացրնելու համար իր ձայնը, կը խնդրէ նաեւ Օլկա դքսուհին միջնորդութիւնը հօրը քով, զոր նա կը խոստանայ եւ կը հաղորդէ իրեն Աղ. Գորչակովի բերնով Շտուտկարտի մէջ(56): Արդիւնքը՝ նոյնպէս ոչինչ: Բայց նա չի յուսահատիր. կը դիմէ

կրկին Բրուսիոյ արքայեղբօր Կուլիեմի, եւ անոր կրկնել կու տայ իր խնդիրը Յարին՝ Աղեքս. Ուլովի ձեռքով(57). եւ միտէ մը վերջ նոյն իշխանէն պատասխան կը ստանայ՝ թէ Նիկողայոս բարկացեր է Լեւոնի դէմ եւ թէ առ այժմ ժամանակը չէ ո՛ր եւ է շնորհք ընդունելու(58):

Երկու տարի վերջ (19 Հոկտ. 1852), կրկին կը գրէ Լոնտոնէն առ նոյն Յարը, պահանջելով՝ ո՛չ հայրենի երկիրը, այլ շարժուն հարստութիւնը, եւ սպառնալով հասարակաց դատաստանին դիմել մամուլի միջոցաւ:

Դարձեալ պատասխան չկայ: Երրորդ անգամ մը կը գրէ նոյն քաղաքէն (19 Փետր. 1853), ըսելով թէ անոր պաշտօնեաները տակաւին կը պահէին իր ինչքերը: Կը հարցնէ ո՞ր օրէնքի համաձայն է յափշտակութիւնը որ նախատինք մըն է Ռուսիոյ անուան: Կը յիշեցնէ իր յետին կարօտութիւնը, եւ դարման կը պահանջէ(59):

(57) Անդ՝ 11.

(58) Ա. Փրեզերիկ բողոքագրին մէջ (հ. 8).

(59) Անդ, (60) ձեռ. 12-13.

Նիկողայոս խուլ է միշտ:

Իրեն տրուած հարիւր դուկադը շատոնց սպառած էր: Իր ջատագովը կ'ըսէ թէ նա Անգղիոյ մէջ կ'օգտուէր հափաւոր դոմարէ մը զոր յարմար ժամանակին ձեռք ձգած ու զետեղած էր աւանդապահի մը քով. եւ որ օր մը յանկարծ կ'անյայտանայ եւ կ'անցնի Ամերիկա, Լեւոնի դրամն ալ միասին, որ այդպէս ամէն տեղ աւաղակներու կը հանդիպի: Իր հայրենակիցները կարեկցաբար կը միարանին եւ կը նուիրեն իրեն կարեւոր օժանդակութիւն մը. եւ նա կը հեռանայ Անգղիայէն Գաղղիա, ուր կ'սպորուստը աւելի դիւրագին էր(60):



Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ

(Շարունակելի)

ՔՆՆԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԱԻԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

«Քննիչ» Գրքերը (Յոլի. Ե. 39)

ԵՐԿՈՒՔՈՒԿԵՍ տարիէ ի վեր լոյս տեսած է Վիեննական Միութեան Հայրերէն՝ Հ. Գարեգին Վրդ. Գարանֆիլեանի կողմէ աշխարհաբարի թարգմանուած ու մեկնաբանուած «Նոր Կտակարան»ը, 2րդ Աւետարաններ և Գործք Առաքելոց, պատկառելի հատոր մը (13 × 20 մեծութեամբ, 594 էջ), հրատարակուած Գահիրէի «Նոր Աստղ»

տպարանին մէջ, ընտիր թուղթի վրայ, ութը մեծագիր նկարներով: Հրատարակութիւնը նուիրուած է Երանանորդ Մեծն Միութար Աբրահմի մահուան երկրորդ տարեդարձին: Յառաջաբանին մէջ իսկ Մեծարգոյ Թարգմանիչը կը յայտարարէ թէ ներկայ հրատարակութիւնը կու գայ իրականացնելու տարակուծութիւնը կու գայ իրականացնելու հին բաղձանք մը աշխարհաբար Աւետարան

(50) Անդ՝ 6. (51) Անդ՝ 7, 13, ևն.
(52) Գիւան Ս. Ղազարու, 1858.

(53) Յուլ. 5, 7. ձեռ. 77. (54) Յուլ. 7.

(55) Անդ. (56) Անդ՝ 15.